

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ձորագետ համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Ձորագետ	Ավագանու հերթական նիստ	18.02.2020թ.	14:00	Ձորագետի համայնքապետարան (գ. Ձորագետ, 1փ. 41)

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020թ. փետրվարի 18-ին՝ ժամը 14.00-ին Ձորագետի համայնքապետարանում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի

Ժամը՝ 14.00

1. Ձորագետ համայնքի ավագանու 2020թվականի փետրվարի 18-ի հերթական նիստի օրակարգ հաստատելու մասին
զեկ. Ա. Գիրգորյան
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2019թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին :
զեկ. Ա. Գիրգորյան
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2020թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

զեկ. Ա. Գիրգորյան

4. Հայաստանի

Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի վարչական կարգն ու այլ մանկերը հաստատելու մասին:

տարածքում պրոսպեկտի գովազդի սեղադրման

զեկ. Ա. Գիրգորյան

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Ձորագետ համայնքի ավագանու 2020թվականի փետրվարի 18-ի հերթական նիստի օրակարգը:

4. Ձորագետ համայնքի ավագանու 2020թվականի փետրվարի 18-ի հերթական նիստի օրակարգ հաստատելու մասին

զեկ. Ա. Գիրգորյան

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2019թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին :

զեկ. Ա. Գիրգորյան .

6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2020թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

զեկ. Ա. Գիրգորյան .

7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղադրման կարգն ու պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Գիրգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Ձորագետ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ձորագետ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի :

2. Հաստատել 2019թվականի Ձորագետ համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

**ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Ձորագետ համայնքի 2019վականի բյուջեն կատարվել է.

Ձորագետ համայնքի 2019 թվականի բյուջեի ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 6669.4 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 6650.3 հազար դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 100.3%: Ընդ որում՝ Ձորագետ համայնքի 2019 թվականի բյուջեի վարչական մասով ծրագրված (ճշտված) 6650.3 հազար դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 6669.4 հազար դրամ՝ ապահովելով 100.3% կատարողական:

Ձորագետ համայնքի 2019 թվականի ճշտված բյուջեով սեփական եկամուտները ծրագրվել են 2404.4 հազար դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 2423.8 հազար դրամ կամ 100.8%: Սեփական եկամուտների փաստացի հավաքագրման ցուցանիշը ավել է **2018 թվականի համապատասխան ցուցանիշից 1329.3 հազար դրամով:**

Ձորագետ համայնքի 2019 թվականի բյուջեի միջոցների հաշվին իրականացվել է 10566.3 հազար դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 98.1%-ը: Հարկ է նշել, որ 2019 թվականի բյուջետային տարվա ավարտին պարտքեր չեն թողնվել և փաստացի կատարողականի սահմաններում բոլոր ստանձնած պարտավորությունները ամբողջությամբ ֆինանսավորվել են Ստորև ներկայացվում է Ձորագետ համայնքի 2019 թվականի բյուջեի փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն քանակական և համեմատական վերլուծություն:

Հարկեր և տուրքեր.

Գույքահարկի գծով փաստացի կատարողական ցուցանիշները կազմել են 690.6 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 617.1 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 111.9%, որը **2018 թվականի փաստացի ցուցանիշից ավել է 105.0 հազար դրամով:** - հողի հարկի մասով մուտքերը կազմել են 64.2 հազար դրամ, նախատեսված 53.9 հազար դրամի դիմաց, կատարողականը կազմել է 119.1%, որը **2019 թվականի փաստացի ցուցանիշից ավել է 4.2 հազար դրամով:**

- տեղական տուրքերի գծով փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 903.5 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 903.5 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 100%, որը **2018 թվականի փաստացի ցուցանիշից ավել է 235.5., հազար դրամով:**

Պաշտոնական դրամաշնորհներ.

Պաշտոնական դրամաշնորհների մասով մուտքերը կազմել են 4245.6 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 4245.6 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 100.0%, որից ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և այլ դոտացիաների գծով փաստացի մուտքերը կազմել են 4245.6 հազար դրամ:

Այլ եկամուտներ.

Ձորագետ համայնքի 2019 թվականի բյուջեով այլ եկամուտների գծով նախատեսված էր 755.5 հազար դրամի մուտքեր, որի դիմաց փաստացի հավաքագրվել է 765.5 հազար դրամ, որից. - գույքի (այդ թվում հողերի) վարձակալությունից եկամուտների գծով փաստացի մուտքերը կազմել են

15,5 հազար դրամ, ծրագրված 15,5 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 100%
 -Տեղական վճարների գծով փաստացի մուտքերը կազմել են 50.0 հազար դրամ, ծրագրված 40.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 125.0 %:

Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտների գծով փաստացի մուտքերը կազմել են 200.0 հազար դրամ, ծրագրված 200.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 100 %:

- Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհների գծով փաստացի մուտքերը կազմել են 500.0 հազար դրամ, ծրագրված 500.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 100 %:

- Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկատումներից մուտքերը կազմել են 870.2 հազար դրամ՝ նախատեսված 870.2 հազար դրամի դիմաց: *Ծախսեր*

Ձորագետ համայնքի 2019 թվականի բյուջեի միջոցների հաշվին կատարվել է 10566.3 հազար դրամի ծախսեր, ծրագրված (ճշտված) 10773.3 հազար դրամի դիմաց կամ ծրագրվածի 98.1%-ը:

Ձորագետ համայնքի 2019 թվականի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի ունի հետևյալ պատկերը

հազար դրամ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի անվանումը	Տարեկան ճշտված բյուջեով նախատեսված	Փաստացի ծախս	Կատարման %
Աշխատանքի վարձատրություն	4100.1	4046.8	98.7%
Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	1485.0	1408.1	94.8%
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	25.0	25.0	100%
Այլ ծախսեր	170.0	152.4	89.6%
Հ ի մ ն ա կ ան մ ի ջ ո ճ ն ե ռ	5400.1	5398.4	100%
Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր	-259.0	-259.0	100%

Չար տադրված ակտիվների իրացումից մուտքեր	-147.9	-205.4	138.9
Ընդամենը	10773.3	10566.3	98.1%

Ձորագետ համայնքի 2019 թվականի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների ունի հետևյալ պատկերը

հազար դրամ

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժնի անվանումը	Տարեկան (ճշտված) բյուջեով նախատեսված	Փաստացի կատարված	Կատարման %
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	8495.1	8347.3	98.3%
Տնտեսական հարաբերություններ	593.1	534.0	100.0%
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	1160.1	1160.0	100.0%
Հանգիստ, մշակույթ և կրոն	500.0	500.0	100.0%
Սոցիալական	25.0	25.0	100.0%

պաշ պան ու թյ ու ն			
Ընդամենը	10773.3	10566.3	98.1%

Ստորև ներկայացվում են Ձորագետ համայնքի 2019 թվականի բյուջեով կատարված ծախսերի վերլուծությունը և հիմնավորումը՝ ըստ ծախսային ծրագրերի.

Աշխատավարձի գծով ծախսերը՝ 4046.3 հազար դրամ՝ նախատեսված 4100.1 հազար դրամի դիմաց կամ 98.7%: Աշխատավարձի գծով ծախսերն իրականացվել են Ձորագետ համայնքի ավագանու 2019 թվականի մարտի 22-ի N 7-Ա որոշմամբ սահմանված հաստիքացուցակի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով

պարգևատրման գծով ծախսերը կազմել են 100.0 հազար դրամ՝ նախատեսված 100.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 100%: Պարգևատրման ֆոնդի հաշվին պարգևատրվել է հիմնականում տարվա ընթացքում լրացուցիչ աշխատանք կատարող աշխատող

Էներգետիկ ծառայությունների գծով ծախսերը կազմել են 9.9 հազար դրամ՝ նախատեսված 86.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 11.5%, որը ներառում է Ձորագետի համայնքապետարանի շենքի էլեկտրաէներգիայի ծախսերը:

Կապի ծառայությունների գծով ծախսերը կազմել են 120.0 հազար դրամ՝ նախատեսված 120.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 100% և ներառում են , ինտերնետային ծառայությունների համար տրամադրված գումարները:

Գործուղումների գծով ծախսերը կազմել են 14.2 հազար դրամ՝ նախատեսված 15.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 94.7%: Գործուղումների գծով ծախսերը հաշվարկվել են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներով:

Տեղեկատվական ծառայությունների գծով ծախսերը կազմել են 16.0 հազար դրամ՝ նախատեսված 16.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 100%-ով: Ծախսերը ներառում է, թերթերի տպագրական աշխատանքների իրականացման, ծառայությունների ձեռք բերման ծախսերը:

Մասնագիտական ծառայությունների գծով փաստացի ֆինանսավորումը կազմել է 215.0 հազար դրամ՝ նախատեսված 215.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 100.0%-ով: մատուցված ծառայությունները ներառում են համայնքային սեփականության հանդիսացող անժարժ գույքի (շենքերի և հողերի) չափագրման և շարժական գույքի գնահատման ծառայությունները:

Գրասենյակային նյութեր և հագուստ հոդվածով փաստացի իրականացվել է 170.0 հազար դրամի ծախս՝ նախատեսված 170.0 հազար դրամի դիմաց կամ կատարվել է 100%-ով: Նշված հոդվածի շրջանակներում ձեռք են բերվել զուտ գրասենյակային նյութեր (թուղթ, գրիչ, արագակար, մատիտ, թղթապանակ և այլն):

Վերապատրաստման և ուսուցման նյութեր հոդվածով փաստացի իրականացվել է 23.0 հազար դրամի ծախս՝ նախատեսված 23.0 հազար դրամի դիմաց կամ կատարվել է 100%-ով:

Տրանսպորտային նյութերի գծով փաստացի կատարողականը կազմել է 80.0 հազար դրամ՝ նախատեսված 80.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 100%,:

Հատուկ նպատակային այլ նյութեր հողվածով փաստացի իրականացվել է 760.0 հազար դրամի ծախս՝ նախատեսված 760.0 հազար դրամի դիմաց կամ կատարվել է 100%-ով:

Այլ նպաստներ բյուջեից հողվածով փաստացի կատարվել է 25.0 հազար դրամի ծախս՝ նախատեսված 25.0 հազար դրամի դիմաց կամ կատարվել է 100%-ով:

Այլ հարկեր հողվածով փաստացի կատարվել է 23.0 հազար դրամի ծախս՝ նախատեսված 30.0 հազար դրամի դիմաց կամ կատարվել է 76.7%-ով:

Պարտադիր վճարների գծով փաստացի կատարողականը կազմել է 129.4 հազար դրամ՝ նախատեսված 140.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում նախատեսվել և իրականացվել է գյուղապապետարանի հաշվեկշռում հաշվառված մեքենայի տեխնիկական զննման և տուրքերի վճարման ծախսերը և այլ պարտադիր վճարներ: Տրանսպորտային սարքավորումների հողվածով ավտոմեքենայի ձեռք բերման համար նախատեսվել էր 2300.0 հազար դրամ, փաստացի ծախսը կազմել է 2300.0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 100%:

Վարչական սարքավորումների գծով փաստացի ծախսը կազմել է 1200.0 հազար դրամ՝ նախատեսված 1200.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 100%, Այն ուղղվել է Ձորագետի համայնքապետարանի աշխատակազմի տեխնիկայի (այդ թվում՝ համակարգչային) գույքի և խաղահրապարակի գույքի ձեռք բերմանը:

Այլ մեքենաներ և սարքավորումներ հողվածով նախատեսված 900.1 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 900.0 հազար դրամ, որն ուղղվել է Ձորագետ համայնքի փողացային լուսավորության համար լուսադիողային լուսարձակների ձեռք բերմանը:

Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր կազմել են 464.9 հազար դրամ՝ նախատեսված 406.9 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 114.3%:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
 Ձ ՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ
 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
 /Զեկ. ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2020թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ (ՏԱՊ 2020) համաձայն հավելվածի:

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔ**

Համայնքի 2020 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Արմեն Գրիգորյանը

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2020թ. փետրվարի 18 -ի թիվ -Ա. որոշմամբ

(նիստի ամսաթիվը)

ՁՈՐԱԳԵՏ 2020թ.

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ-----	3
2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ և ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ-----	3
3. ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ և ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ) -----	6
4. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2020Թ. ԾՐԱԳԻՐԸ -----	9
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ -----	10
6. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ -----	12

Ներածություն

Ձորագետ համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի (SUՊ-ի) մշակման հիմնական նպատակն է՝ ապահովել համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (ՀՀԶԾ-ով) սահմանված համայնքի տեսլականի, ռազմավարության, ոլորտային նպատակների և ծրագրերի իրագործումը:

SUՊ – ի մշակման մեթոդական հիմք է հանդիսացել «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի փորձագետների կողմից 2017 թվականին պատրաստված «Համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման» մեթոդական ուղեցույցը:

SUՊ-ի 1-ին բաժնում ներկայացված են՝ համայնքի տեսլականը, համայնքի կայուն զարգացման ցուցանիշները (**Աղյուսակ 1**), ոլորտային նպատակները (**Աղյուսակ 2**):

SUՊ-ի 2-րդ բաժնում բերված են համայնքի 2020թվականի համապատասխան ֆինանսական միջոցներով ապահովված ծրագրերը (**Աղյուսակ 3**) և այդ ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 5**), ինչպես նաև այն ծրագրերը, որոնք դեռևս ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով (**Աղյուսակ 4**):

SUՊ-ի 3-րդ բաժնում ներկայացված է՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման 2020 թվականի ծրագիրը (**Աղյուսակ 6**):

SUՊ-ի 4-րդ բաժնում բերված է SUՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 7**):

SUՊ-ի 5-րդ բաժնում (Աղյուսակ 8) ներկայացված է՝ տեղեկատվություն SUՊ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային ծրագրի իրականացման արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ:

1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Ըստ համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 15-ի թիվ 13-Ա որոշմամբ հաստատված ՀՀԶԾ-ի՝ **համայնքի տեսլականն է՝ Ձորագետ համայնքը դարձնել մաքուր, բարեկարգ, առևտրի և սպասարկման, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ տարածք:**

SUՊ-ում ոլորտների և ծրագրերի ազդեցության վերջնական արդյունքի որոշ որակական ցուցանիշների գնահատման համար կիրառվել է 10 բալանոց սանդղակ՝ 1- շատ վատ, 2 – վատ, 3 – բավականին վատ, 4 – ավելի շատ վատ, քան լավ, 5 – միջին՝ ոչ լավ, ոչ վատ, 6 - ավելի շատ լավ, քան վատ, 7 – բավականին լավ, 8 – լավ, 9 – շատ լավ, 10 – կատարյալ:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
----------	------------------	-----------------

Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	4%	3%
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	25.2	28.6
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	235	235
Համայնքում գործող ՓՄՁ-ների քանակը և դրանցում աշխատատեղերի թիվը (հատ)	1/1	1/1

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Ոլորտ 1. Ընդհանուր			
Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի, աշխատակազմի, մատուցված հանրային ծառայություններից	միջին՝ ոչ լավ, ոչ վատ	ավելի շատ լավ, քան վատ
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, %	25.2	28.6
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ	-	-	-

պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:			
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն	-	-	-
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 5. Հողօգտագործում			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 6. Տրանսպորտ			
Բարձրացնել համայնքային ենթակայության ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակը և ապահովել ճանապարհային անվտանգ երթևեկությունը:	Կազմակերպվել է համայնքի ճանապարհների նախագծանախաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքը	միջին՝ ոչ լավ, ոչ վատ	ավելի շատ լավ, քան վատ
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 8. Կրթություն			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 10. Առողջապահություն			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			

2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 14. Անասնաբուժություն և բուսասանիտարիա			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 16. Զբոսաշրջություն			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-

2. Համայնքի 2020 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)
Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Բնակավայր(եր)ը
Ոլորտ 1. Ընդհանուր			
1.	Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում	6323.0	Ընդհանուր համայնքային
Ընդհանուրը		6323.0	
Ոլորտ 6. Տրանսպորտ			
1.	Ձորագետ համայնքի ներհամայնքային ճանապարհների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	226.1	Ընդհանուր համայնքային
Ընդամենը		226.1	
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ		133.5	Ընդհանուր համայնքային
Պահուստային ֆոնդ		96.6	
Ընդհանուրը		6779.2	

Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով

Ծրագրեր, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով 2020 թվականի ընթացքում չեն նախատեսվել:

5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտ

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
Ոլորտ 1. Ընդհանուր					
Ոլորտային նպատակ . Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:		<ul style="list-style-type: none"> . Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի, աշխատակազմի, մատուցված հանրային ծառայություններից - ավելի շատ լավ, քան վատ . Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում՝ 25.2% 			
Ծրագիր 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում					
Բնակավայրը՝ Ձորագետ					
Ծրագրի նպատակ.	Ծրագրի ազդեցության	Ծրագրի գնահատման	Համայնքի	2020թ.	Համա

<p>Ապահովել աշխատակազմի բնականոն գործունեությունը, բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը և մատչելիությունը:</p>	<p>(վերջնական արդյունքի) ցուցանիշ.</p> <p>Աշխատակազմը բնականոն գործել է, բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը - ավելի շատ լավ, քան վատ</p>	<p>համակարգ.</p> <p>ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ</p>	<p>ղեկավար,</p>	<p>հունվար – 2020թ. դեկտեմբեր</p>	<p>պատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարություն</p>
<p>Միջանկյալ արդյունք 1. Ապահովվել է աշխատակազմի բնականոն գործունեությունը:</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</p> <p>1 ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների իրազեկվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - բավականին լավ</p> <p>2.ՏԻՄ-երի կողմից մատուցված համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների թիվը - 3</p> <p>3.Անշարժ գույքի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում - 2%-ով</p> <p>4.Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում - 248 օր</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ.</p> <p>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>	<p>Համայնքի ղեկավար,</p>	<p>2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր</p>	<p>ամապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել</p>

Միջոցառումներ (գործողություններ) .		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)			
<p>1. Աշխատակազմի պահպանություն</p> <p>2. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգերի սպասարկում</p> <p>3. Համայնքի անշարժ գույքի կառավարում</p>		<p>1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանման ծախսեր՝ 6323.0հազ.դրամ</p> <p>2. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատողներ՝2: Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր՝ 1</p> <p>3. Համայնքապետարանի վարչական շենք և գույք Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ</p>			
Միջանկյալ արդյունք 2. Բարձրացել է համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).	Տեղեկատվական աղբյուրներ	Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ,	2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել
<p>1. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման փաստացի գումարների տարեկան աճ – 10 %-ով</p> <p>2. Հողի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում-2%-ով</p> <p>3. Գույքահարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում-2 %-ով</p>		Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ			
Միջոցառումներ (գործողություններ) .		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).			
<p>1. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրմամբ զբաղվող աշխատակիցների վերապատրաստումներ</p> <p>2. Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաների ճշտում, հարկատուների ծանուցում</p>		<p>1. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրմամբ զբաղվող աշխատակիցներ՝ 1</p> <p>2. Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաներ՝ առկա է</p>			
Միջանկյալ արդյունք 3. Բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).	Տեղեկատվական աղբյուրներ	Համայնքի ղեկավարի	2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան ենթակա
	1. ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքից, մատուցված	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ			

	<p>ծառայությունների մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - ավելի շատ լավ, քան վատ</p> <p>4. ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացված դիմում-բողոքների թվի նվազում - 5 %-ով</p> <p>5. Համայնքի ղեկավարի, ավագանու կողմից կազմակերպվող բնակիչների ընդունելությունների հաճախականությունը - շաբաթը 1 անգամ</p> <p>6. Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը – 2 օր</p>				<p>ռուցվածքների և մասնագետների առկայությունը</p>
<p>Միջոցառումներ (գործողություններ) .</p> <p>1. Աշխատակազմի աշխատողների արդյունավետ և թափանցիկ գործունեության ապահովում</p> <p>2. Համայնքի ֆինանսական թափանցիկ և արդյունավետ կառավարում</p> <p>3. Համայնքի գույքի կառավարման բարելավում</p> <p>4. Աշխատակազմի աշխատակիցների աշխատանքային պայմանների բարելավում</p>	<p>Ատքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</p> <p>1. Աշխատակազմում առկա համակարգչային սարքեր և սարքավորումներ - 2</p> <p>2. Աշխատակազմում ֆինանսական (այդ թվում՝ գույքի) կառավարման հարցերով զբաղվող աշխատողներ -1</p> <p>3. ՏԻ-անը բնակիչների մասնակցության կարգեր -3</p>				

Հ/հ	Գույքի անվանումը	Հասցեն կամ ծածկագիրը	Զբաղեցրած տարածքը/ մակերեսը (մ ²)	Վիճակի գնահատումը	Գույքի կառավարման գործառնություն	Այլ բնութագրիչներ
1.	Համայնքապետարանի շենք և գույք	գ. Ձորագետ 1փ. 41	24.18քմ	լավ	համայնքի կողմից օգտագործման	
2.	Ակումբի շենք	.գ. Ձորագետ 1փ. 18	77.1քմ	վատ	համայնքի սեփականություն	Չի օգտագործվում
3.	Մանկապարտեզի շենք	գ.Ձորագետ 1փ. 121	272.81քմ	լավ	անհատույց օգտագործման է տրված դպրոցին	
4.	Ավտոճանապարհային կամուրջ	գ.Ձորագետ	65գճմ	բավարար	համայնքի կողմից օգտագործման	
5.	Թունելի և ավտոճանապարհային կամուրջ	գ.Ձորագետ	75գճմ	բավարար	համայնքի կողմից օգտագործման	
6.	Ցեմենտի պահեստ	Ձորագետ 1փ.. 80	50.4քմ		համայնքի սեփականություն	
7.	Ձորահէկ ավանի ջրատար	Ձորագետ	3000գճմ	վատ	համայնքի կողմից օգտագործման	
8.	Կոյուղու ցանց	գ..Ձորագետ	200մ	վատ	համայնքի կողմից օգտագործման	
9.	Գազամատակարարման ցանց	գ..Ձորագետ	3000մ	բավարար	համայնքի կողմից օգտագործման	
10.	Գերեզմանատներ	գ. Ձորագետ	2 հատ	բավարար	համայնքի կողմից օգտագործման	

11.	Ավտոմեքենա ՎԱԶ 21213 Նիվա	գ. Ձորագետ	1 հատ	լավ	համայնքի կողմից օգտագործման	
12.	Ավտոսպասարան	գ. Ձորագետ	32.4քմ	լավ	համայնքի կողմից օգտագործման	
13.	Ավտոկանգառ	գ. Ձորագետ	62.38քմ	վատ	համայնքի կողմից օգտագործման	
14.	Միջբնակավայրային նշանակության ճանապարհներ	գ.Ձորագետ	6,0 կմ	բավարար	համայնքի կողմից օգտագործման	
15.	Միջբնակավայրային նշանակության ճանապարհներ	գ.Ձորագետ	4,0 կմ	վատ	համայնքի կողմից օգտագործման	
16.	Էներգետ.,կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	գ.Ձորագետ	11.5 հազ.դրամ		վարձակալությա ն	Կնքվել է պայմ. Ձորագետ հիդրո ՍՊԸ-ի հետ
17.	Գյուղատնտեսական այլ հողատեսքեր	գ.Ձորագետ	4.0 հազ.դրամ		վարձակալությա ն	Կնքվել է պայմ. Ֆրիմա Արցախ ՍՊԸ-ի հետ

3. Համայնքի ՍԱՊ-ի ֆինանսավորման պլանը

Աղյուսակ 7. ՍԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Հ/հ	Ծրագրի նվաճումը	Ծրագրի	Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները
-----	-----------------	--------	----------------------------------

		արժեքը (հազ. դրամ)	Համայնքի բյուջե	Պետական բյուջե	Դրնոր կազմակերպություններ	Համայնք-ՔՀ-ՄՀ համագործակցություն	Այլ աղբյուրներ
Ոլորտ 1. Ընդհանուր							
1.	Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում	6323.0	6323.0				
Ընդամենը		6323.0	6323.0				
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում							
	2020 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում							
	2020 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն							
1	2020 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
Ընդամենը		-	-				
Ոլորտ 5. Հողօգտագործում							
	2020 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
Ոլորտ 6. Տրանսպորտ							
	Տրանսպորտային ծառայությունների մատուցում, ներհամայնքային ճանապարհաների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	226.1	226.1	-	-	-	-

Ընդամենը							
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ							
	2020 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
Ոլորտ 8. Կրթություն							
	2020 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ							
	2020 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
Ոլորտ 10. Առողջապահություն							
	2020 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ							
	2020 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն							
	2020 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն							
	2020 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
Ոլորտ 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա							
	2020 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն							
	2020 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
Ոլորտ 16. Զբոսաշրջություն							
	2020 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն							
	2020 թվականին ոլորտում ծրագրեր	-	-	-	-	-	-

	և միջոցառումներ չեն նախատեսվել:						
Ընդհանուրը		6549.1	6549.1				
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ		133.5	133.5				
Պահուստային ֆոնդ		96.6	96.6				
Ընդհանուրը		6779.2	6779.2	-	-		-

4. Համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը
Աղյուսակ 8. Տեղեկատվություն համայնքի ՏԱՊ-ում ներառված ծրագրերի արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ

Ոլորտ 1. Ընդհանուր					
Ծրագիր 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում					
Բնակավայրը՝ Ձորագետ					
Արդյունքային ցուցանիշները		2020 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Համայնքապետարանի աշխատակազմի աշխատողներ	2			
	Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր	1			
	Համայնքապետարանի վարչական շենք և գույք	ըստ գույքագրման ցուցակի			
	Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրմամբ զբաղվող աշխատակիցներ	1			
	Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաներ	առկա է			
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա	98.7			

	ապառքներ, հազ.դրամ				
	Աշխատակազմում առկա համակարգչային սարքեր և սարքավորումներ	2			
	Աշխատակազմում ֆինանսական (այդ թվում՝ գույքի) կառավարման հարցերով զբաղվող աշխատողներ	1			
	ՏԻ-անը բնակիչների մասնակցության կարգեր	3			
	Անշարժ գույքի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում, %	2			
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման փաստացի գումարների տարեկան աճ, %-ով	10			
	Հողի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում, %-ով	2			
Ելքային (որակական)	ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների իրազեկվածության աստիճանը (հարցումների հիման վրա)	բավականին լավ			
	ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքից, մատուցված ծառայությունների մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)	ավելի շատ լավ, քան վատ			
	ՏԻՄ-երի, աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացվող դիմում-բողոքների	5			

	թվի նվազում, %-ով				
Ելքային (Ժամկետայնությամբ)	Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում, օր	248			
	Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը, օր	2			
	Համայնքի ղեկավարի, ավագանու կողմից կազմակերպվող բնակիչների ընդունելությունների հաճախականությունը	շաբաթը 1 անգամ			
Վերջնական արդյունքի	Աշխատակազմը բնականոն գործել է, բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը	ավելի շատ լավ, քան վատ			
Ծախսեր, հազ. դրամ	Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ	6779.180			

Ոլորտ 6. Տրանսպորտ

Ծրագիր 1. Ներհամայնքային ճանապարհների նախագիսանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ

Արդյունքային ցուցանիշները		2020 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ	1			
	Նախագծանախահաշվային փաստաթղթեր	3			
Ելքային (քանակական)	Ներհամայնքային ճանապարհի նախագծանախահաշվային	3			

	փաստաթղթերի կազմման աշխատանքների քանակը				
Ելքային (որակական)	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմմում-%-ով	100			
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրականացման ժամկետը, ամիս	1ամիս			
Ծախսեր, հազ. դրամ	Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ	226.1			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-րդ մասի 41-րդ կետով, «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Ձորագետ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգը՝ համաձայն N°1 հավելվածի:
2. Հաստատել Ձորագետ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու պայմանները՝ համաձայն N°2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի տարածքում արտաքին գովազդի տեղադրման կարգն ու պայմանները հաստատելու մասին նախագիծը կազմվել է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:
Սույն որոշման ընդունումը պայմանավորված է կանոնակարգել և հստակեցնել Ձորագետ համայնքի տարածքում արտաքին գովազդի թույլտվությունը:
«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի համաձայն արտաքին գովազդի ծավալը, քանակությունը, տեղաբաշխման կարգն ու պայմանները սահմանում է համայնքի ավագանին, իսկ արտաքին գովազդի թույլտվություն տալու

իրավասությունը վերապահված է համայնքի ղեկավարին ուստի արտաքին գովազդի տեղադրման կարգն ու պայմանները կանոնակարգելուց հետո համայնքային բյուջե կվճարվի տեղական տուրք, համայնքի ավագանու կողմից սահմանված դրույքաչափով:

Արտաքին գովազդը՝ տարբեր տեսակի տեղեկատվական միջոցների օգնությամբ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն է բնակավայրերում գովազդի միջոցներով (վահանակների, գրաժապավենների, լուսատախտակների, պլակատների, ազդագրերի, հայտարարությունների և այլն) անորոշ թվով անձանց շրջանում և կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ: Արտաքին գովազդի տեղադրման կարգի ու պայմանների սահմանումից հետո հստակ կլինի համայնքի տարածքի ներսում առկա տեղեկատվության համար վճարելու և թույլտվության ստացման հետ կապված գործընթացը:

Նախագծի ընդունմամբ պայմանավորված ակնկալվող արդյունքն համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի ոլորտին առնչվող օրենսդրական կարգավորումներն են:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) սահմանվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի (այսուհետ՝ գովազդ) տեղադրման կարգը: Կարգն ընդունվել է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

2. Արտաքին գովազդը (այսուհետ՝ գովազդ) իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն է բնակավայրերում գովազդի միջոցներով (վահանակների, գրաժապավենների, լուսատախտակների, պլակատների, ազդագրերի, հայտարարությունների և այլն) անորոշ թվով անձանց շրջանում և կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ: Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի N 270 որոշման պահանջներին համապատասխան տեղադրվող ցուցանակների վրա զետեղվող տեղեկատվությունը արտաքին գովազդ չի համարվում:

Արտաքին գովազդ են համարվում «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղադրման պայմաններով» (այսուհետ՝ պայմաններ) սահմանված մակերեսից ավելի մակերեսով տեղադրվող ֆիրմային նշանները և գովազդող ապրանքանշանները:

3. Կանոնները տարածվում են բոլոր այն տարածքների և տրանսպորտային միջոցների վրա, որտեղ պետք է տեղադրվի արտաքին գովազդը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա գովազդի միջոց տեղադրելու համար Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված կարգով Ձորագետ համայնքի ղեկավարի որոշմամբ հողամասը օգտագործման իրավունքով հանձնվում է դիմում ներկայացրած գովազդատուին (գովազդակրին)՝ միաժամանակ կնքելով հողօգտագործման համապատասխան պայմանագիր, հետագայում տվյալ կողմի հետ

նախապատվության իրավունքով երկարացնելու պայմանով:

5. Գովազդի տեղադրումը թույլատրվում է, եթե այն համապատասխանում է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, կարգի և պայմանների պահանջներին:

II. ԳՈՎԱԶԳԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6. Գովազդի տեղադրման թույլտվությունը (հետագայում՝ թույլտվություն) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն և սահմանված կարգով տրվում է Ձորագետ համայնքի ղեկավարի կողմից՝ Ձև 1-ով սահմանված ձևաչափով:

7. Գովազդային միջոց տեղադրելու համար գովազդատուն (գովազդակիրը) հայտ է ներկայացնում Ձորագետ համայնքի ղեկավարին՝ նշելով իր անունը, գտնվելու վայրը, գովազդի տեղադրման վայրը և ժամկետը, ինչպես նաև հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները:

Հայտին կցվում է համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի միջոցի էսքիզը, որտեղ նշվում են գովազդի արտաքին չափերը, գովազդի տեղադրման ձևը (վահանակ, լուսատախտակ, գրաժապավեն, պլակատներ և այլն) և տեխնիկական լուծումները:

8. Ձորագետի համայնքապետարանը գովազդի միջոց տեղադրելու համար գովազդատուից (գովազդակիրից) հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո պարզում է գովազդային միջոցի համապատասխանությունը կարգի և պայմանների պահանջներին (եթե այն թերի է, հետ է վերադարձվում թերությունը վերացնելու և նորից 15-օրյա ժամկետում ներկայացնելու համար) և 15 օրվա ընթացքում Ձորագետ համայնքի ղեկավարի որոշմամբ տրվում է գովազդի տեղադրման թույլտվություն, որում նշվում են՝ գովազդատուի (գովազդակիրի) անվանումը, գովազդի չափերը, տեղադրման ձևը, գովազդային նյութերի անվանումը, թույլտվության գործողության ժամկետը:

9. Նույն հասցեում գովազդ տեղադրելու համար մեկից ավելի գովազդատուների (գովազդակիրների) հայտերի առկայության դեպքում Ձորագետ համայնքի ղեկավարը «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն հայտարարում և անց է կացնում մրցույթ, որի արդյունքներով մրցույթի հաղթողին տրվում է գովազդի տեղադրման թույլտվություն:

10. Թույլտվությունը հանդիսանում է հաշվառման փաստաթուղթ, որը գրանցվում է Ձորագետ համայնքի թույլտվությունների հաշվառման մատյանում, իսկ թույլտվության պատճենը և

հաշվառման մատյանը պահվում են համայնքապետարանի աշխատակազմում:

11. Գովազդի միջոցի տեղադրման վերաբերյալ գովազդատուի (գովազդակրի), հայտը 15-օրյա ժամկետում կարող է մերժվել այն դեպքում, եթե՝

1) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում կարգի և պայմանների պահանջներին.

2) խախտվում են «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերի պահանջները.

3) գովազդի միջոցի տեղադրմամբ խոչընդոտվում է ճանապարհային երթևեկությունը կամ քաղաքացիների անցուդարձը, խախտվում են անձանց օրենքով պաշտպանված իրավունքներն ու շահերը:

12. Գովազդային միջոց տեղադրելու հայտի մերժման վերաբերյալ որոշման մեջ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու հիմքերը:

13. Գովազդային նյութերը գովազդային միջոցների վրա տեղադրելու ժամանակ, ինչպես նաև արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխման դեպքում, գովազդատուն (գովազդակիրը) մինչև գովազդային նյութերի տեղադրումը կամ արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխումը, այդ մասին գրավոր տեղեկացնում է Ձորագետ համայնքապետարանին՝ կից ներկայացնելով համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի էքսիզը, որտեղ նշվում են նաև գովազդի արտաքին չափերը: Գովազդի էքսիզը համաձայնեցվում է համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան աշխատակցի հետ:

14. Գովազդը պետք է համապատասխանի «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, կարգի, պայմանների և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերի պահանջներին:

15. Գովազդի տեղադրման միջոցի մոնտաժային աշխատանքները կատարվում են հայտատուի պատվերով՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից մշակված և Ձորագետ համայնքի աշխատակազմի համապատասխան հարցերով զբաղվող մասնագետի հետ համաձայնեցված նախագծով: Արտաքին գովազդի միջոց տեղադրելու համար գովազդակիրն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում գովազդի տեղադրման միջոցի մոնտաժման ապահովության և դրա անվթար շահագործման համար:

16. Գովազդատուն (գովազդակիրը) իրավասու չէ արտաքին գովազդի տեղադրման համար իրեն տրված թույլտվությունը փոխանցել կամ օտարել այլ անձի:

17. Գովազդի տեղադրման թույլտվության ժամկետը լրանալու կամ երկարացնելու,

պայմանագրով նախատեսված հիմքերով այն վաղաժամ դադարելու (լուծելու) դեպքում գովազդատուն (գովազդակիրը) պարտավոր է ողջամիտ ժամկետում իր միջոցներով ապամոնտաժել գովազդը, իսկ զբաղեցրած տարածքը բերել նախկին վիճակին:

18 .Կարգով նախատեսված պարտավորությունը գովազդատուի (գովազդակրի) կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Ձորագետ համայնքի ղեկավարի որոշման համաձայն գովազդի (գովազդային միջոցի) ապամոնտաժումն իրականացվում է Ձորագետ համայնքապետարանի կողմից՝ օրենքով սահմանված կարգով գովազդատուից (գովազդակրից) ստանալով համապատասխան փոխհատուցում:

III. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

19 Ձորագետ համայնքի ավագանին համայնքի վարչական տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքի դրույքաչափերը սահմանում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

20. Այն դեպքում, երբ թույլտվության և պայմանագրի գործողության ընթացքում գովազդվող տեղեկատվությունը փոփոխվում է, որի համար օրենքով նախատեսված է տեղական տուրքի այլ դրույքաչափ, գովազդատուն (գովազդակիրը) վճարումը կատարում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Ձորագետ համայնքի ավագանու կողմից հաստատված համապատասխան դրույքաչափերով:

21 Հողօգտագործման վճարի չափը չի կարող պակաս լինել տվյալ հողի հարկի դրույքաչափից:

22. Կանոններին համապատասխան վճարված գումարներն ուղղվում են Ձորագետ համայնքի բյուջե:

23 .Գովազդատուի (գովազդակրի) կողմից անբարեխիղճ գովազդ թույլ տալու դեպքում՝ Ձորագետ համայնքի ղեկավարը գովազդի մասին օրենսդրության խախտման դադարեցման և հակագովազդի իրականացման վերաբերյալ գրավոր նախազգուշացնում է գովազդատուին (գովազդակրին):

24. Գովազդատուները (գովազդակիրները) իրավասու են օրենքով սահմանված կարգով դատական կարգով բողոքարկվել գովազդի տեղադրման կապակցությամբ Ձորագետ համայնքի ղեկավարի որոշումներն ու գործողությունները:

25 . Ձորագետ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղադրման գործընթացի և գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է Ձորագետ համայնքի ղեկավարը:

26. Գովազդային օրենսդրության պահանջների խախտումը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:


ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒԻ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱՎԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ

Թ ՈՒ Յ Լ Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն N ____

Տրվում է



գովազդատուի և (կամ) գովազդակրի
անվանումը

արտաքին գովազդի տեղադրման վայրը (տեղը)

արտաքին գովազդ տեղադրելու միջոցը
(վահանակ, լուսատախտակ, գրաժապավեն, պաստառ և
այլն)

գովազդային նյութի անվանումը

Գովազդի մակերեսը _____ քմ

Թույլտվության գործողության ժամկետը՝ «__» _____ 20__թ.

ան՝ «__» _____ 20__թ.

Կ.Տ.

Ձորագետ համայնքի ղեկավար՝ _____

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ
I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղադրման պայմանները (այսուհետ՝ պայմաններ), մշակվել են «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղադրման կարգին համապատասխան:
2. Ձորագետ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի միջոցների (այսուհետ՝ գովազդ) տեղադրումը թույլատրվում է կարգի և պայմանների պահանջներին համապատասխան:

II. ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

3. Արտաքին գովազդի միջոց են համարվում Ձորագետ համայնքի վարչական տարածքում տեղադրվող գովազդային տեղեկատու կրողները՝ անկախ շենքերի, շինությունների և հողամասերի սեփականության ձևից: Դրանց թվում են՝ վահանակային կայանքները (վահանակները), տանիքային կայանքները, մեծանկարները (պաննո), էլեկտրոնային էկրանները, ցուցանակները, բարձակները, ցուցատախտակները, շենքերի մուտքերի և պատուհանների հովհարները (մարկիզ), գրաժապավենները (տրանսպարանտ) և այլն:

III. ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 4.. Գովազդի տեղադրմանը ներկայացվող պահանջները՝
 - 1) Ձորագետ համայնքի վարչական տարածքում գովազդը և դրանց առանձին մասերը չեն կարող տեղադրվել երթևեկելի մասի մակերևույթից ճմետրից ցածր բարձրությամբ եզրաքար չունեցող ճանապարհի կողքին:
 - 2) Գովազդի միջոցները չպետք է՝
 - ա. խոչընդոտեն ճանապարհային երթևեկության ապահովմանն ու անվտանգությանը. փողոցների ու մայթերի անցմանը.
 - բ. սահմանափակեն տեսանելիությունը ավտոճանապարհների վրա.
 - գ. առաջացնեն երթևեկության մասնակիցների կուրացում (լույսով, այդ թվում՝ նաև անդրադարձող).
 - դ. հանդիսանան հետիոտնի շարժմանը արգելք.
 - ե. լինեն ճանապարհների վտանգավոր հատվածներում և տեղադրվեն լուսամփոփների ու ճանապարհային կանգնակների վրա:
 - 3) Գովազդի տեղադրումը տրանսպորտային միջոցների վրա և պետական ավտոմոբիլային ճանապարհների հարող տարածքներում չպետք է հակասի Հայաստանի

Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 24-ի N 2137-Ն որոշման պահանջներին:

4) Գովազդ տեղադրել չի թույլատրվում՝

ա. բնակելի շենքերի մոտ, եթե դրանք հանդիսանում են աղմուկի, տատանման, հզոր ճառագայթման և էլեկտրամագնիսական դաշտի աղբյուր.

բ. պատմական և ճարտարապետական հուշարձանների վրա, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների շենքերի վրա և դրանց տարածքում.

գ. ճանապարհային ցանցում, երբ այն անհամապատասխան է ճանապարհատրանսպորտային տվյալ իրավիճակի հետ և նմանություն ունի (արտաքին տեսքով, պատկերով և ձայնային էֆեկտով) ճանապարհային նշանների, ճանապարհային երթևեկության կազմակերպման և այլ տեխնիկական միջոցների հետ.

դ. փողոցների խաչմերուկների սահմաններից և դրանց մոտեցումներից 20 մետրից ոչ պակաս հեռավորության վրա:

5) Գովազդի առանձին կանգնած մնայուն միջոցների տեսակները՝ Վահանակային կայանքները (վահանակները) տեղեկատվության համար մակերես նախատեսող կոնստրուկցիաներ են և բաղկացած են հիմքից, հիմնակմախքից (կարկաս) և տեղեկատու դաշտից.

6) Տեղեկատու դաշտի չափի տեսակներն են՝

ա. մեծ չափերի - 3մ x 4մ, 3մ x 6մ և այլ չափերի.

բ. միջին չափերի - 1.8մ x 1.2մ, 2մ x 3մ.

գ. փոքր չափերի - 0.6մ x 0.9մ և ավելի փոքր չափերի:

7) Վահանակներին ներկայացվող պահանջներն են՝

ա. երկկողմանի կատարում,

բ. միակողմանի կատարում, որի դեպքում գովազդի հակառակ կողմը պարտադիր դեկորատիվ ձևավորում է:

8) փողոցներում, մեկ ուղղությամբ երկու հարևան վահանակների միջև եղած հեռավորությունը պետք է կազմի առնվազն՝

ա. 10 քմ - 12 քմ՝ 50 մ - 75 մ.

բ. 6 քմ - 10 քմ՝ 30 մ - 50 մ.

գ. 4 քմ - 6 քմ՝ 20 մ - 30 մ.

դ. 2 քմ - 4 քմ՝ 10 մ - 20 մ.

ե. մինչև 2 քմ՝ 10 մ:

9) Մասնագիտական փորձաքննություն անցած և համաձայնեցված նախագծերի առկայության դեպքում կարող են օգտագործվել կոնստրուկցիաներ:

5. Շենքերի, շինությունների, ինչպես նաև Ձորագետ համայնքի բարեկարգման տարրերի վրա տեղադրվող արտաքին գովազդի և տեղեկատվության մնայուն միջոցների տեսակները՝

1) Տանիքային կայանքները ծավալային կամ

մակերեսային կոնստրուկցիաներ են, որոնք տեղադրվում են ամբողջովին կամ մասամբ՝ շենքի ճակատային մասում կամ տանիքին:

2) Տանիքային

կայանքները բաղկացած են կոնստրուկցիայի կրող մասի ամրակցման տարրերից և տեղեկատու կայանքից:

3) Ամրակցման տարրերը, ինչպես և կոնստրուկցիայի կրող մասի հակառակ կողմը պետք է ծածկվեն դեկորատիվ պանելով:

4) Կոնստրուկցիաների միջոցով տանիքային կայանքի գովազդային վահանակի տեղադրումը պետք է համաձայնեցվի Ձորագետի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան աշխատակցի հետ:

6. Պատի մեծանկարներ (պաննո) կոչվում են արտաքին գովազդի այն միջոցները, որոնք տեղադրվում են շինությունների պատերին հետևյալ ձևերով՝

1) Պատկեր (տեղեկատվական դաշտ), որն անմիջապես շերտաձաձկում է պատը: Պատկերի կոնստրուկցիան հավաքվում է ամրակցման տարրերից, հիմնակմախքից և տեղեկատու դաշտից:

2) Պատի մեծանկարների տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է կոնստրուկցիայի կամ անմիջական չափերով:

7. Բարձակ (կոնստրուկցիայի կոնստրուկցիա) են կոչվում երկկողմանի հարթակային վահանակները, որոնք ամրակցվում են կայմասյուններին կամ շենքերի վրա:

Համապատասխան հիմնավորման դեպքում թույլատրվում է բարձակները տեղադրել գյուղական լուսավորման և կոնտակտային ցանցերի կողմ կոնստրուկցիաների վրա:

8. Շահագործման անվտանգության նպատակով բարձակները տեղադրվում են հողի մակերևույթից ոչ պակաս, քան 3 մետր բարձրության վրա:

9. Հիմքերի վրա կանգնեցված բարձակները տեղադրվում են երթևեկելի մասից դուրս՝ մայթի կողմը: Արգելվում է մեկից ավելի բարձակների տեղադրումը մեկ հիմքի վրա:

10. Բարձակի տեղեկատու դաշտի մակերեսը հաշվարկվում է կողմերի ընդհանուր մակերեսով:

11. Էկրանավորող սարքավորումներն արտաքին գովազդի և տեղեկատվության միջոց են: 1) Դրանց կոնստրուկցիան ներառում է էկրանավորող (վերարտադրող) սարքավորման մակերես (էկրան) կամ տեղեկատու պատկեր: 2)

Հարթ պատկերների համար նախատեսված տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է էկրանավորող պատկերի մակերեսով:

12. Գովազդային վահանակների ներքևի եզրը պետք է տեղադրված լինի փողոցի մակերեսից 6 մետրից ոչ պակաս բարձրության վրա:

13. Հենասյան հիմքերը հողի ծածկույթում պետք է տեղադրվեն քաղաքաշինական նորմերին և շինարարական տեխնոլոգիաներին համապատասխան:

Չափորոշիչներում չնշված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի N 270 որոշմամբ հաստատված ցանկում չընդգրկված

2.0 քառակուսի մետրից ավելի մակերեսով ֆիրմային նշանների և գովազդվող տարբեր ապրանքանշանների տեղադրումն իրականացվում է Ձորագետի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան աշխատակցի առաջարկությունների հիման վրա:

14. Տրանսպորտային միջոցների վրա գովազդի տեղադրումը.

1) Տրանսպորտային միջոցների վրա գովազդի տեղադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 24-ի N 2137-Ն որոշման պահանջներին համապատասխան:

